

491.99-8
U-44
1902

3205

91.99-8
U-44

85-251176

2010

2002

Одобрено Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго
Учебнаго Округа.

Գ. Ա Ղ Ա Յ Ե Ա Ն Ց

ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ՀԵԶԻՒ

ԸԹԵԶԻՆ ԳԻՐՔ

Ա Յ Բ Բ Ե Կ Ա Ր Ա Վ

ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ ՏՊԱՇՐՈՒԹԻՒՆ



«Չուն,
Չուն,
դուք ո՞յս
շու։»

1909
Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ Պարզանեանցի, Գանովակի գող. № 3.

Տիպոգրաֆія М. Вартанянца, Гановск, ул. А, № 3.

Одобрено Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго
Учебнаго Округа.

491.99-8

Հ. ԱՂԱՅԻՆՑ

4-44

ՈՒՍՈՒՄՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶԻՒ

ԱԹԱՀԻՆ ԳԻՐ-Բ

U S B B B U U U S U U

ՏԱՐԱՆՈՒԹԵՐՈՐԾԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Shoe

1902

P H Φ L P U

Տպարան Ա. Վարդանեանցի, Գանովսկի վոր. № 3.

Типографія М. Вартанянца, Гановс

18142-59



Շահումյան պատմութեան վահագութեան համար և առաջարկութեան համար

34883-43

ՏԵՂԱՐԿԻ Հ

ՅԱՀՈՎԱՅԻ

ԽՈԳԻ ՎԵՐԱՎԱՐ

ՀԱՄԱՐ

Վ. Ա. Ա. Վ. Ա. Վ.

ՀՕՎՈՐ ԱՌԱ ՀԱՅՈՎԱՅԻ
Դозволено Цензурою Тифлисъ, 22-го Сентября 1902 г.



2051
Վ. Ա. Վ. Վ.
Վահագութեան համար
Վահագութեան համար



92-301

— 4 —

արտ

տատ տար տըտ

պատ պար պար պատ

մարտ

մարտ, մատ, տամ, տատմ, տրտմ,

մարտած

մարտը

մարտը, տատը, մատը, արտը, արտմա

մարտը տալիս է

լիւ է

տալ, լալ, էլ, սէլ, խմ, սիմ, միս, մաս,
էր, սէր, տէր, սար, սալ, լար, սիրտ,
սմիս, սամի, սարի, տարի, մարի, մասիս,
մասրի, մատիտ, մարիտմ.

Մարտը ամիս է:

Մի ամիս է մարտը:

Մասիսը սար է:

Արամ, արի մի մատիտ տամ:

Մարիամ, արի, իմ մատիտը տար:

Մարտը տալիս է ձնծաղիկ:

Ճնծաղիկ

Ճի, ինձ, տանձ, սանձ, սալ, ծամ, ծիտ, ծիծ,
սան, նան, տակ, տիկ, կէս, մէկ, կամ, կալ,
լակ, կար, նալ, նամ, աղ, տաղ, մաղ, ծաղիկ,
կաղին, իլիկ, կաղնի, կարաս, Մինաս.

Մարտը ձնծաղիկ է տալիս:

Մարտ ամիսը ձնծաղիկ է տալիս:

Ձնծաղիկը մարտին կըլինի:

Մարտ ամսին ձնծաղիկ կըլինի:

ա. է. լ. ի.

մ. բ. տ. ձ. ն. կ. դ. ծ. լ. ս.
Ա. է. լ. ի. Մ. Բ. Տ. Ն. Շ. Ծ. Լ. Ս.

Ապ—րի—լը կա—պոյտ մա—նու—շակ.

պ. չ. ու. ոյ.

պապ, պաս, պատ, կապ, ուր, ում, ուլ.

էշ, շուն, ուշ, շուտ, նուշ, կոյս, լոյս, ծոյլ,
կատու, կաշի, շամամ, մաշիկ, արշակ.

կապած, անկապ, պանիր, կապոյտ, Ղուկաս.

Ապրիլը տալիս է կապոյտ մանուշակ.

Մանուշակը կապոյտ ծաղիկ է:

Կապոյտ մանուշակը ծաղկում է ապրիլին:

Ապրիլին ծաղկում է կապոյտ մանուշակը:

ա. է. լ. ի. ու. ոյ.
լ. ծ. կ. գ. Ղ. Մ. Ի. Ն. շ. պ. ս. տ. լ. ւ.

Ա. Ե. Ը. Ի. Ռ. Վ. Շ. Ո. Չ. Պ. Ա. Տ. Շ. Ա. Վ. Շ. Ր.



մաս Մայսին բացւում է վարդը. պղ—բղ
այ, ց. կ. դ. բ.

այս, ալդ, այն, բայց, բան, բոյս, բաց.
լաց, ցուրտ, դա, դու, դաս, սարդ. վաղ,
վաղ, վաշ, վար, վուշ, սայլ, մայր, այծ,
այսպէս, այլպէս, վայրի.

Վարդը մայսին է բացւում: Աղփառմ
Մայսին վարդը բացւում է: Անչափ Ն
Կարմիր վարդը բացւում է մայսին:
ա. է. ը. ի. ու. ոյ. այ,

բ. դ. լ. ժ. կ. ձ. գ. մ. ն. շ. պ. ո. վ. տ. ը. ց. ւ.
օ. է. է. ի.

բ. Գ. Լ. Ծ. Կ. Զ. Ղ. Մ. Ե. Շ. Պ. Ս. Վ. Ց. Ի. Յ. Զ. Ի.



Սոխակը երգում է անուշակ
ո. ե. զ. խ.

սով, ծով, կով, բոխ, խակ, խաղ, խամ.

խով, մուխ, մեխ, սեխ, ղեղ, զիր, զոմ.
զոյն, զայլ, զող, տող, ցեղ, ցեխ.


Գեղտմ, Գրիպոր, զերի, խախալ, խաղող.

Սոխակը անուշ է երգում.

Սոխակի երգը շատ անուշ է:

ո. աւ.

ով, որովէս, որդի, ոսկի, որբ, որդ, որս.
կաւ, խաւ, լաւ, ցաւ, նաւ.



Յունիսը մեղ խոտ է տալիս,
Իսկ յուլիսը առատ ցորեն։

յ. գ. ռ.

մեղ, ձեղ, եղ, խող, զոխ, զարդ, պարզ։

ռուս, ռումբ, կեռ, տառ, բառ։

յայտնի, յանկարծ, յատուկ, յիտոն, Յիտուս։

լեզու, զազան, զանգակ, ռամիկ, ռեզին։

Յունիսն ու յուլիսը առատ ամիսներ են։

Ամառն ամեն բան առատ է լինում։

Ամառն անտառ, ձմեռը դաշտ։

ա. ե. է. ը. ի. ռ. ո. ու. ոյ. այ.

բ. գ. դ. գ. լ. խ. ծ. ծ. կ. զ. ա. զ. մ. յ. ն. շ. պ.

ռ. ռ. վ. տ. ը. ց. ւ.

Ա. Ե. Է. Զ. Ի. Ո.

Բ. Գ. Դ. Գ. Լ. Խ. Ծ. Ծ. Կ. Զ. Ա. Շ. Պ. Ն.
Ռ. Վ. Տ. Ց. Ց. Ի.


Օգստոսը տանձ ու խնձոր եւ ուրիշ շատ հատուն մրգեր։

օ. հ. հ.

օր, օդ, օդ, օձ, տօն, հօր, մօր։

Օգստոսին համնում են շատ մրգեր։
Ես այդ ամսին իմ հօր հետ գնում եմ այգի։

Սեպտեմբերը մեղ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը,
Հոկտեմբերը կարմիր գինի,
Նոյեմբերը — բողկն ու տակը։



Դեկտեմբերին ձիւն է զալիս,
Յունտարին ծածկում սար ու ձոր,
Փետրտարին սկսում է
Փոփոխակի ցուրտ ու տաք օր:

իւ. փ. ք.

ձիւն, սիւն, իւր, իւղ, զիւղ, շիւղ.

փակ, փոս, փառք, քար, քոյր, քեղ, դիրք.

արիւն, հարիւր, փափուկ, քաղաք.

Չիւնը դեկտեմբերին է զալիս.
Նոյեմբերին էլ է ձիւն զալիս:
Սարերումը ձիւն շատ է զալիս:
Յունտարին շատ ցուրտ է լինում.



Ահա այսպէս բոլոր տարին դպ
Թաւալում է չորս շրջանում.
Այս պատճառով չորս ժամանակ
Չորս եղանակ է մեզ բերում:

թ. չ. ճ. ժ.

թաթ, թութ, ճիթ, չեչ, ճաթ, ճութ, ճաղ.

մաճ, ճաշ, ժամ, թէժ, խեժ, ժախ, ժեռ.

ջանք, ջուխա, սաջ, քաջ, լանջ, ունջ, մունջ,

թանաք, ճանաշ, ջաղաց, ժառանգ, շամիչ.

թիւ, լրիւ, հաշիւ, տիւ, խստիւ.

ծոյլը պատժի արժանի է:
Ճրագն իր տակին լոյս չի տալ:
Ինչ որ անես, առաջդ կըզայ:
Արած լաւութիւնը չի կորչիլ:

Մեր դաստիան աշակերտների

անունները:

Եան

Տիգրան Արամեանց.

Արէնիկ Գուրզինեանց.

Յարութիւն Յովսէփեանց.

Գրիգոր Միքայէլեանց.

Դանիէլ Իսրայէլեանց.

Յովհաննէս Մարկոսեանց.

Սիմէոն Եսայեանց.

Եշիէն Հայկազունի.

Եղիսաբէթ Արծրունի.

Հայկանուշ Աղայեանց.

Վարսենիկ Շահնազարեանց.

Գրեցէք ձեր և ձեր լնկերների անուններն ու ազգանունները:



յ անձայն

Տղայ, երեխայ: լնձայ, հսկայ, արքայ, ճանպայ, օրւայ,
տարւայ...

(նա) գայ, տայ, լայ, կայ, գնայ, մնայ, աղայ, կարդայ,
իմանայ, մոռանայ, ուշանայ, խնդայ, ուրախանայ,
հիւանդանայ, տկարանայ, հասկանայ, լաւանայ...

(Ես) եկայ, իմացայ, մոռացայ, ուշացայ, ստացայ,
հասկացայ, ուրախացայ, վեր կացայ, վայր եկայ,
կերայ, կշտացայ...

Կիստձայնաւոր.

Հայ, վայ, շայ, փայ Նոյ, հայր, մայր, վայր, ծայր,
գրաւ, սայլ, փայլ, այլ, բայց, այծ, լոյս, բոյս, կոյս,
ծոյլ, թոյլ, նշոյլ...

Բաղաձայն

յոյս, յոյն, յարդ, յարդ, յարկ, յիշատակ, յիշել, յան-
կարծ, յայտնի, յատակ...

Վերցրած.

սա, գա, նա, սրա, դրա, նրա, (դու) ասա, ազա արա,
կարդա, խնդա, գնա, մնա, (օտար բառեր և յատուկ
անուններ) խաթա, բալա, մաշա, բօշա, ուստա, Յու-
դա, Երեմիա, Իտալիա...

ԶԱՅՆԱԿՈՐՆԵՐ

մ. է. է. ը. ի. ն. օ.
իւ. եա. եօ.

ԲՈԼՈՐՈԳԻՐ

ա. բ. գ. զ. յի. զ. չ. լ. թ. ժ. ի. լ. իս. ծ.
կ. հ. ձ. դ. մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ո. ո.
փ. տ. ր. ց. փ. պ. և. օ. ֆ:

Գ Լ Խ Ս Գ Ւ Ը

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ. Հ.
Զ. Ղ. Ճ. Մ. Ց. Ն. Շ. Ո. Զ. Պ. Զ. Ո. Ս. Վ. Տ. Ը.
Յ. Ի. Փ. Ք. Օ. Ֆ.

Ծ Ա Գ Կ Ո Գ Ւ Ը

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ.
Հ. Զ. Ղ. Ճ. Մ. Ց. Ն. Շ. Ո. Զ. Պ. Զ. Ո. Ս. Վ. Տ. Ը.
Բ. Յ. Ի. Փ. Ք. Օ. Ֆ.

Ե Ղ Ս Գ Ւ Ը

աբգղեղելը ք ժ ի շ ի ծ կ հ ա ղ ձ
մ յ ն շ ն շ ը ն ս ւ ր ց ւ փ ք օ ք

ԹԱՀՆԻԿՆԵՐ

Աղունակ

Ղ Ա - ղ Ա - ղ Ա,
Ա - ղ Ա - ղ Ա,
Ն Ա Կ - Ն Ա Կ,
Ա - ղ Ո Ւ - Ն Ա Կ,
Թ Ա - ռ ռ ռ ...


Կ Ա Հ Ա Գ Ա Կ

Հ Ա Հ Ա Հ Ա,
Կ Ա Հ Ա Հ Ա,
Ղ Ա Կ, ղ Ա Կ,
Կ Ա - Հ Ա - Ղ Ա Կ,
Թ Ա - ռ ռ ռ .

Ծ Ի Մ Ի Կ

Ծ ի տ ե մ, ծ ի տ ե մ
ծ լ լ լ լ լ լ ո ւ մ ե մ,
ձ ի կ, ձ ի կ, ճ ի կ,

Աստուածում եմ,
Թըռչկոտում եմ,
Տիրկ, տիրկ, տիրկ.
Արի, թերիկ,
Արի, փետրիկ,
Որ ես դառնամ
Փոքրիկ ծիտիկ,
Փոքրիկ ծիտիկ,
Պիծիկ միծիկ,
Թըռուռո...,



Սրբություն առաջաւագակ
2 որս եղանակ

Մարտը տալիս է ձնծազիկ,
Սպրիլը կապոյտ մանուշակ,
Մայիսին բացւում է վարդը,
Սոխակը երգում անուշակ:
Յոնիսը մեղ խոտ է տալիս,
Իսկ յուլիսը առատ ցորեն,
Օգոստոսը տանձ ու խնձոր,
Եւ սուրից շատ հասուն մրգեր:
Սեպտեմբերը մեղ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը,
Հոկտեմբերը կարմիր գինին,
Նոյեմբերը բողին ու տակը:
Դեկտեմբերին ձիւն է զալիս,
Յունիարին ծածկում սար ու ձոր
Փետրւարին սկսում է
Փոփոխակի ցուրտ ու տար օր:
Ոհա այսակս բոլոր տարին
Թաւալում է չորս շրջանում.
Սյա պատճառով չորս ժամանակ,
Չորս եղանակ է մեղ բերում:

18/42-15
1006/29294



ՀՀ. ՀԱՐՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ե. ԲՈՅԼՈՎԻ ԱՆ
ՀԱՅ-ССՀ
Ա. ՄԱԿԱՐԵՆՔ
Ա. ՍԱՍԱՆԻԱՆԻ ԱՆ



Արագաղը կանչում է.
 Ծուղլուղու,
 Ղու—ղու—ղու:
 Պառաւ նանը զարթնում է.
 Տա—տա—տա.
 Պա—պա—պա:
 Արլար, ինչու կանչեցիր,
 Ինչու նանին զարթեցրիր,
 Ախ դու—դու, այ ջու-ջու:
 *
 Ախ նանի, ջան նանի,
 Մեկ մի վեր կացրնի.
 Թոնդ մի քիչ էլ մնանք,
 Քնից լաւ կըշտանանք:



Արլարը շուտ է կանչում.

Արլարը քեզ է խաբում.

Արլար, ինչու կանչեցիր.

Ինչու նանին զարթեցրիր.

Ախ դու—դու, այ ջու-ջու:

Այ ջու—ջու: միաց ըաց իմի զու

— 19 —

Առաջոտ նանալով պայծա ուշան

պարած մարմիկով նանալով բայր

մահ լիճ ըստ լիճան չ մակա ըստափ զու

Արեգակը գուրա է բեկել ովմզ մայ

սիրու ի ուր զուպ վազոր Պըսպղալով զօրու

Ճողքը հերթից ներս է լնկել զադ

աւարձ չ մայմանին Ճողշտալով զուլար

ծիսը ծառին կըշկըսում է

ծըլւրալով.

Չորումն առուն քըշքըսում է

Վըշվըշալով.

Ծոյլ տղայի քունն է տարել

Խըւրմիալով.

Տրեխները շունն է տարել


Մըւմըւալով:

Արշակունյաց պատմվածքներ
— 20 —

Լուսացած գիշեալիք

Լուսացաւ, լուսացաւ, լուսն է բարին,
ծիսն է ծառին, համ է թառին։ Աշխատա-
ւոր, վեր կաց բանի, ծոյլ տղայի քունը տանի։

Ինչու աքլարը կանգնած է բակում, պինդ-
պինդ կանչում է իր կուկուրիկուն։ — Ենդուր
որ վաղուց արևն է ծագել, բայց ծոյլ երե-
խան քնից չի զարթել։ Դեռ չի վեր կացել,
աղօթքն արել, դպրոցի գասը զեռ չի սովո-
րել։ Կանչում է աքլարն իր կուկուրիկուն,
տղայոց պարտքը միտներն է ձգում։



Ծեծւած գառնիկ

— Ինչի՞ կուլաս դու, գառնիկ։

«Խիստ ծեծ կերայ ես, մայրիկ։

— Քեզ ով ծեծեց, իմ գառնիկ։

«Մէկ չար պառաւ, ախ, մայրիկ։

— Ինչի՞ ծեծեց քեզ, գառնիկ։

«Ծառի տակն էի, մայրիկ։

— Ինչով ծեծեց քեզ, գառնիկ։

«Մէծ մահակով, ուհ, մայրիկ։

— Ո՞րտեղիդ զարկեց, գառնիկ։

«Ռտիկներիս, ուհ, մայրիկ։

— Ի՞նչպէս լացիր դու, գառնիկ։

«Մէ... մէ... մէ... մայրիկ։



ծիտը և բազէն

ծիտը ծառին ծրւուսմ է.

ծիւ, ծիւ, ծիւ:

բազէն գլխին պտղտուսմ է.

վու, վու, վու:

ծիտը լոեց, ծիտը վախեց.

Վայ, վայ, վայ:

բազէ, թրու. բազէ, թրու.

Հայ, հայ, հայ:

բազէն թուտ,

բազէն վախտ,

Ի՞նչ լաւ էլաւ,

Հէ, հէ, հէ:

ծիտիկ-միտիկ, պիծիկ-միծիկ,

Պրտպլտուրիկ, շրլպլտուրիկ,

Դու լաւ պրծար շար բազէի

Սուր ճանկերից, հա, հա, հա:



չարսի հաշիւր

Երկուշաբթի հաց կըթխեմ, երեքշաբթի
լոշ կըթթեմ, չորեքշաբթի լըւացք կանեմ,
հինգշաբթի կար կըկարեմ, ուրբաթ օրը պաս-
կը կենամ, շաբաթ օրը ժամ կըգնամ, լոյս
կիրակի փոանց-փոանց՝ կըգարդարիմ, կեր-
թամ հերանց:

Ա ր և

Արև, արև, եկ, եկ.

Զիզի քարին վէր եկ.

Սև-սև ամպեր, հեռացէք.

Արևին ճանալա տրէք.

Թողեք զա զայ մեզ մօտ.

Դրա լոյսին ենք կարօտ:

Կարմիր արև, եկ, եկ,

Նախշուն քարին վէր եկ:

Արևը յաղթեց ամպերին,

Ճողքը ձգեց սարերին,

Զիզի քարը, տես, տես.

Պապղում է ուկու պէս.

Սիրուն արև, միշտ եկ,

Զիզի քարին վէր եկ:

Հ Ե Ք Ի Ա Թ

վ ն կ ա շ զ գ ե զ գ ո ւ թ ա շ ա յ լ ի շ
ն ե մ ա ր գ ր ա յ լ ի թ ի շ ա յ լ ի շ ա յ լ ի շ
— ս պ ո ւ թ ա յ լ ի թ ի շ ա յ լ ի շ ա յ լ ի շ

Զ մ ե ռ ն է ր գ ի շ ե ր ը ե ր կ ա ր :

**Դ ի ւ լ ն ա զ տ ա տ ը՝ գ լ ո ւ խ ը բ ո ւ ր ո ւ թ վ ր ա յ
դ ր ա ծ, ն ն ջ ո ւ մ է ր :**

**Ե ր ե խ է ք ը վ ր ա յ թ ա փ ւ ե ց ի ն, ք ո ւ ն ը փ ա խ-
յ ր ի ն, ո ր ի ր ե ն ց հ ա մ ա ր մ ի հ ե ք ի ա թ ա ս ի:**

Ն ա է լ ս կ ս ե ց.

Է լ է լ է չ ի է լ է լ մ ի ս ի ր ո ւ ն ա ր տ ո ւ տ ի կ:
Կ տ ո ւ ց ը ս ո ւ ր մ ե լ ը Ա ր շ ա կ ի ք թ ի ն մ ա ն:
Բ մ բ ո ւ լ ը խ ո ւ ճ ո ւ ճ Տ ի գ ր ա ն ի մ ա ղ ե ր ի ն մ ա ն:
Թ և ն ե ր ը փ ա փ լ ի կ ՝ ծ ո ղ ի կ ի կ ո ւ ն ե ր ի ն մ ա ն: Ա հ ա
ա յ ս պ է ս ս ի ր ո ւ ն է ր ա ր տ ո ւ տ ի կ ը:

**— Բ ա ի ն ձ ն մ ա ն ո չ ի ն չ չ ո ւ ն է ր, ա ս ե ց
Վ ա ն ի ն:**

— Բ ա ի ն ձ, ձ ա յ ն տ ր ւ ա ւ չ ո ի վ ա ի կ ը:

**— Ի ն ձ է լ չ ա ս ե ց ի ր, տ ա տ ի, լ ա ց է լ ա ւ
ն ա ղ ի կ ը:**

**— Ս պ ա ս ե ց է ր, ս պ ա ս ե ց է ր, ե ր է խ է ր, զ ե ռ
չ ե մ վ ե ր ջ ա ց ր ե լ, ա մ ե ն ը ի դ է լ բ ա ժ ի ն կ ը տ ա մ,
ա ս ե ց տ ա տ ը և չ ա ր ո ւ ն ա կ ե ց.**

**« Ա շ ի կ ն ե ր ն ա յ ն պ է ս ն ա խ չ ո ւ ն է ի ն, ի ն չ-
պ է ս Վ ա ն ի ի ա չ ք ե ր ը: ։ զ գ յ ա ն ե զ գ ո ւ թ ա յ լ ի շ ա յ լ ի շ
Կ ա տ ա ր ն ա յ ն պ է ս կ ա ր մ ի ր ո ւ թ է ր, ի ն չ պ է ս
Հ ո ի վ ա ի կ ի թ շ ե ր ը: ։ զ ա ս ա մ ը բ ա յ ա ն ա յ ա ն ա յ ա ն ա յ ա ն
Ո ւ ն ե ր ն ա յ ն պ է ս բ ա ր ա կ է ի ն, ի ն չ պ է ս
Ն ա ղ ի կ ի մ ա տ ն ե ր ը: ։ զ ա յ ա ն ա յ ա ն ա յ ա ն ա յ ա ն ա յ ա ն
— ե ս ո տ ն ե ր ը չ ե մ ո ւ զ ո ւ մ, ա ս ե ց ն ա -
զ ի կ ը:**

— Լ ա մ, ո տ ն ե ր ը չ ե մ ա ս ի լ. ա տ ո տ ի կ ն ե ր ը

**կ ո ւ զ է ս ։ օ ւ ն ե զ գ մ է գ ր ա ն ա յ ա ն ա յ ա ն ա յ ա ն
— 2 ե մ ո ւ զ ո ւ մ, ե ս ո տ ո տ ի կ ն ե ր ն . է լ ա չ ե մ**

**ո ւ զ ո ւ մ: ։ յ ա ն ա յ ա ն ա յ ա ն ա յ ա ն ա յ ա ն ա յ ա ն ա յ ա ն
— Բ ա ի ն չ կ ո ւ զ ե ս, ն ա ղ ի կ ը:**

**— Ե ս ա շ ի կ ն ե ր ն ե մ ո ւ զ ո ւ մ: ։ յ ա ն ա յ ա ն ա յ ա ն ա յ ա ն
— Ա շ ի կ ն ե ր ն ի ն ձ է տ ր ւ ե լ տ ա տ ը, ք ե զ
չ ե մ տ ա լ, զ ր շ ե ց Վ ա ն ի ն:**

**— Ն ա ղ ի կ, կ ո ւ զ է ս կ ա տ ա ր ը զ ո ւ վ ե ր
ա ռ, տ ո տ ի կ ն ե ր ը ե ս կ ր վ ե ր ց ն ե մ, ա ս ե ց չ ո ի վ-
ս ի կ ը:**

— 2 ե մ ո ւ զ ո ւ մ, ե ս ա շ ի կ ն ե ր ն ե մ ո ւ զ ո ւ մ:

**— Վ ա ն ի ի, դ ու կ ա տ ա ր ը վ ե ր ց ր ու, ե ս տ ո-
տ ի կ ն ե ր ը, ի ո կ ն ա ղ ի կ ը՝ ա շ ի կ ն ե ր ը:**

**— ։ յ ա ն ի ն չ ե մ ա ն ո ւ մ կ ա տ ա ր ը . տ ա տ ը յ ո ւ մ
ի ն չ ո ր տ ր ւ ե լ է, ա յ ն է ն ր ա ն ը: ։ ը ա մ ը ա ն ը**

— Ճշմարիտ է ասում Վանին, ամեն կողմից գոչեցին երեխէքը:

Նազիկը գոհ չըմնաց, և վէճը երկար շարունակւեց: Բայց տատը : չէր լսում, նաև գլուխը զրել էր բարձին և քնել. էլ չէին կարող զարթեցնել: Վեր կացան, իրանք էլ մտան տեղերը:

2.

Միւս երեկոյին երեխեքը էլի համարեցին տոտի մօտ, որ շարունակի հեքիաթը: Նայ էլ սկսեց.

,,Անցած գարնանը մեր պարտիղի : ծառ ոփ վրայ մի սիրոն կըկու կար: Ես նստած էի ծառի տակին, և դուք մէկ-մէկ եկաք ինձ մօտ:

Երբ որ սրշակը ներս մտաւ, կըկուն կանչեց՝ կու—կու:

Եկաւ գողիկը, ասեց՝ պու—պու:

Եկաւ Տիգրանը, ասեց՝ տու—տու:

Եկաւ Վանին, ասեց՝ զու—զու:

Եկաւ Հոփիսիկը, ասեց՝ բու—բու:

Եկաւ Նազիկը, կըկուն էլ ոչինչ չասեց, թուաւ գնաց.. .

Օ՛խ, օ՛խ, Նազիկ, օ՛խ, օ՛խ, կըկուն քեզ համար ոչինչ չի ասել, — միաբերան ձայն արւին երեխէքը:

* * *

Նազիկը շատ նեղացաւ, թէ ինչու կըկուն իր համար ոչինչ չի ասել, և սկսեց լաց լինիլ: Տատը նրան ասեց.

— Նազիկ, գիտե՞ս ինչու կըկուն քեզ համար բան չասեց, նա վախեց քեզ բան ասել: Ինչ որ ասէր, զու չպիտի հաւանէիր, ուրիշն էլ իրանը քեզ չէր տալու, ինչպէս անցած երեկոյին:

— Տատի ջան, տատի, որ մէկ էլ կըկուն գայ, ասա ինձ համար էլ մէկ բան ասի, աղաչեց Նազիկը, և նրանից յետոյ շատ խելօքացաւ:



ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԸ

Ենտառի խորքում մի ճօճ կար կապած
և նրա մէջը մի մանուկ դրած:

Հաց էր լինում մանուկը:

Մայր շըկար մօտը, որ ծիծ տար, հայր
շըկար՝ որ պահպանէր:

Ենտառումը մարդ չկար:

Մի գթոտ պախրակով կաթնալից կըրծ-
քով եկաւ ճօճի մօտ իր հորթուկի հետ և
տիտոր ձայնով երեխին ասեց.

Օիրնն երեխայ, որբ ես մ՞եացել,
Քո անքախտ մօրը զերի են տարել.ասա
Նա գնաց, կորան, էլ յիտ շի գալու,
Էլ ոչ մի անգամ քեզ ծիծ շի տալու:
Նա քեզ փաթաթեց լայն տերեներով,
Ճօճի մէջ կապեց «նանիկ» ասելով,
Նա լաց էր լինում աղի արցունքով,
Իր վերջին նանիկն ասում էր լարով.

«Նանա, բալիկս, նանա,
Մեծատերն թաթաշոր,
Մանրատերն ոտաշոր.

Քամին կանի, ժաժ կըտայ,
Պախրէն կըդայ, ծիծ կըտայ.
Նանա, գառնուկս, նանա»:
Ահա եկել եմ, որ քեզ ծիծ տամ ես,
Պահէմ պահպաննեմ իմ հորթուկի պէս:

2.

Պախրան ծիծ տրւաւ երեխին:
Երեխան կըշտացաւ ու քնեց: Պախրան իր
հորթը թողեց երեխի մօտ, իսկ ինքը գնաց
արածելու, որ կաթը շատացնի և երկուսին
էլ ծիծ տայ:

Հորթը մնաց երեխի մօտ, օրօրեց նրան
և նանիկ ասեց.

Նանա, մանկիկս, նանա.
Իմ մայրը քո մօր նման չի,
Տօն ամբ Ամեն խոտից կծիլ չի,
Ամեն չրից խմիլ չի,
Ամեն տափի նստիլ չի:
Նա սարէսար ման կըդայ,
Որբ կըդտնի, ծիծ կըտայ.
Նանա, մանկիկս, նանա:

3.

Պախրան կուրծը լիքը յետ դարձաւ
արօտատեղից և ծիծ տրւաւ երեխին էլ
հորթին էլ:

Ով որ տարով կըմեծանայ, մեր երեխան
օրով մեծացաւ: Հատ շանցաւ, նա դուրս
եկաւ ճօճիցը, մի օր չորեքթաթ տըւաւ,
միւս օրը ոտքի կանգնեց: Մի քանի անգամ
սլկընաց, վէր ընկաւ, բայց շուտով ամրա-
ցաւ և սկսեց պախրի հետևից վազվըղել:

Է.

Մի թագաւորի որդի չէր լինում: Երա-
գումն ասացին. «Թագաւոր, Աստած քեզ
մի որդի սլիտի տայ անտառի խորքումը»:

Մէկ անգամ անգաւակ թագաւորը որսի
գնաց իր որսորդների հետ:

Հատ ման եկան, ոչինչ չըգտան, ոչ մի
որս չըպատահեց նրանց:

Բայց որ հասան անտառի խորքը, այն-
տեղ մի պախրի հետք գտան և նրա մօտ
երեխի ոտնաւտեղեր:


Ամենքը մնացին զարմացած և չին հա-
ստում, որ երեխի կրիխի ոտնաւտեղերը, բայց
թագաւորն իսկոյն յիշեց իր երազը և հրա-
մայեց որսորդներին, որ երեխի հետքը քշեն
և որ որ լինի, գտնեն նրան:

Որսորդները գնացին, և երկու ժամ՝ շան-

ցած՝ մի սիրուն տղայ բերին թագաւորի
մօտ և պատմեցին, թէ ինչպէս գտան նրան
պախրի ծիծը ծծելիս:

Թագաւորը շատ ուրախացաւ: Երեխին
գրկեց, համբուրեց և անունը ողբակ Պախ-
րատուր:

Պախրատուրը մեծացաւ թագաւորի պա-
լատում, լաւ ուսում առաւ, վերջը դառաւ
թագաւոր և մեծ զօրքով դնաց, իր մօրն
ազատեց զերութիւնից:



վիւրարանի Որբի պահողն Աստած է: Ես
մայս մասք սիրութիւն Են միջնական և ուստի
Փալուն արեց արդէն մայր մտաւ, վզովար
Լուսինն էլ փաղուց գնաց, թաք կացաւ: Գ
Գիշերւայ մութը աշխարհս պատեց
Եւ անշանային ցուրտ քամին փշեց:
Սմեն մարդ քաշւեց, իր տուն մտաւ.
Սմեն երեխայ մօր զիրկն ընկաւ.
Միայն մի խեղճ որբ, որ չունէր հայր, մայր,
Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,
Ոտքերը բորիկ, տկլոր ու քաղցած,
Մի տան պատի տակ մնաց կուշ եկած:
Բարի տանտէրը վերեկից նայեց,
Մեր թշւառ որբին ներս հրաւիրեց,
Եւ այնուհետեւ տարաքախտ տղան
Ունէր իր համար տէր ու տիրական:

Անձրեն

Անձրեն, անձրեն, ցած արի.
Քլսցուր ցորին ու գարի.
Քլսցուր ծաղիկ, կանաչ խոտ,
Աւէ փոշի, մաքրէ օդ:
Անձրեն, անձրեն, ցած արի,
Գալլդ ամենուս բարի:

Ճօլի (արևաբեր)

Ճօլի, ճօլի, ճօլ չըկայ,
Խաւիծ անեմ, եղ չըկայ,
Ճօլին ընկել է ծովը,
Ծովիցը հանող չըկայ:
Չըւան բերէք, գուրս հանենք,
Թոկ բերէք, կցան անենք,
Չու բերէք, թաթին զնենք:
Եղ բերէք, վարսը քսենք:
Խովիր պատումն է ժանգոտել,
Զեփչը տափումն է ժանգոտել,
Կանաչ դաշտերին ենք կարօտ,
Կարմիր արևին ենք կարօտ:

Նուրի (անձրենաբեր)

Նուրին, նուրին եկել է,
Եշբա հուրին եկել է,
Շիլա շապիկ հագել է,
Կարմիր գօտիկ կագել է,
Եղ բերէք, վարսը ըսնեք,
Զուր բերէք, վլխին ածենք,
Մեր նուրինի վայը տպւէք.
Ուտենք, լսմինք, ըէփ անենք:

Ճննդեան երգ

Ալէլուիա, ալէլուիա.
Ջրօրհնէքը ճրագլուսով,
Զատիկը՝ արևլուսով,
Թէ քնած էք, վեր զարթեցէք,
Թէ զարթոն էք, լաւ լսեցէք:

Մարիամ եկաւ լալով լալով,
Լալով լալով, մըղկտալով.
Լուսաթաթախ մանուկ ծնեց,
Ծով ու ցամաք լուսով պատեց.

Չեր տունըն է չորեքսխնի,
Չորս սիւներից ո՞րն է սալի *).
Սալը շարակամի սրտին,
Ապրի բարեկամի որդին:
Տունըշն, տունըշն.
Չեր տղայոց անունն ի՞նչ է.
— Հայկ ու Արամ է.

Դրանք նստեն մէկ սեղանի,
Գինի խմեն նախջլւանի,

*.) Սալ=տափակ քար.

Չեր թշնամուն զետը տանի,
Գայլագուաւը աշքը հանի.
Մէկ պոչատ հաւ, մէկ լստիլ *) եղ
Տըւէք՝ ալէլուիան տանի:



Ուտելիք և խմելիք:

Մարդը ուտում է, խմում է, կրծում է
ծծում է, խըլըշտում է, կու է տալիս, լամ-
լամում է: Գինին խմում են, խկ քացախը
ուտում են իրան զլխու կամ կերակուրի մէջ:
Կաթը բրժում ուտում են իրան զլխու և
թէյի հետ խմում են: Երեխան ծծում է մօր
կաթը: Մսաջուրը, խաշուն, չորւան թանէ-

*) Հստիլ=դըւանքա=մէկ ֆունտ:

սպասը, միթրուկը, մախոխը ուտում են և
խրպշտում են: Միան ուտում են, իսկ ոսկորը
կրծում: Դեղը խմում են, եթէ ջրի է, իսկ
զեղահատերը կուլ են տալիս: Պինդ կերա-
կուրներն ուտելիս ծամում են, բայց ատամ
չունեցողները լամլամում են: Մաստակը ծա-
մում են որոճող ուղտի նման: Ճունը լակում
է, լափում է:

Գդալ-փոխ.

Ամառն էր: Հունձն ընկել էր: Մէկ լո-
ռեցի և մէկ աշտարակցի միասին հունձ էին
անում: Ճաշի ժամանակ նրանց համար մա-
ծուն բերին մի մեծ մաթրաթով, բայց երկու
գլալի տեղ մէկն էին բերել:

Երբոր մածնի բրթուճը պատրաստեցին,
աշտարկցին ասեց.

— Գդալը մէկ հատ է. արի գդալ-փոխ
անենք, գդալ-փոխ ուտենք:

Լոռեցին շըհամաձայնեց, ասեց.
— Թոնդ ես գդալով ուտեմ, դու ձեռով կեր:

— Ոչ, պատասխանեց աշտարակցին:
Որովհետև գդալ-փոխ չես ուղում, արի մէկ

բան ասեմ, այնպէս անենք: Ով որ մեզանից
եօթը գիւղի անուն տայ վրայ վրայ, շուտ-
շուտ, գդալով նա ուտի:

— Լաւ. առաջ ես կասեմ, ասեց լոռեցին
ու սկսեց:

— Հէ՛, լօ...ոի, հէ՛, Ու...զըմ...լար...
Լոռեցին միայն երկու գիւղի անուն
տրւաւ, այն էլ չկարողացաւ շուտ-շուտ ասել
ու սուս կացաւ. Յետոյ աշտարակցին սկսեց,
և կարկուտի պէս վրայ տրւաւ.


Ուշի—Ուշական

Փարպի—Բիւրական

Թալին—Թալիշ—Մաստարա

Գդալի պոչը ղէմն արա:

Ասեց ու գդալն առաւ լոռեցու ձեռքիցը:
Լոռեցու բերանը մնաց բաց. բայց էլ ինչ
կարող էր անել. խաղը տանուլ էր տրւել...



Դուտասելուկներ.

1. Ուսուցիչն ուսուցչին ասեց մնուցիչ

Մնուցիչը մնուցչին ասեց ուսուցիչ:

2. Ծափ ճուտը ճմբան ծերին ճիթը ծուռ:

3. Ակնակապ Ակոր ապէր դու ինձ համար
մի ջուխտ ակը կապի ես քեզ ասեմ քեզ
ալքայութիւն ակնակապ Ակոր ապէր:



Խելօք գլուխը.

Բերանն ասեց. ես ամեն ինչ կուտեմ,
կըխմեմ:

Գլուխն ասեց. հըմ:

Ճեռքն ասեց. ես ամեն ինչ կըշինեմ,
կըքանդեմ:

Գլուխն ասեց. հըմ:

Լեզուն ասեց. ես ինչ ուզեմ կասեմ,

կըպատմեմ:

Գլուխն ասեց. հըմ:

Ոտքն ասեց. ես ամեն տեղ կերթամ,
ման կըպամ:

Գլուխն ասեց հըմ:

Բերանն ու ձեռքը, լեզուն ու ոտքը
ասացին գլխին.

— Ինչու ես „հըմ“ անում:

Գլուխը պատասխանեց.

— Ի՞նչ անէք-չանէք, առաջ ինձ պիտի
հարցնէք:

Բերանը մնաց բաց, իսկ լեզուն կըմ-
կըմալով ասեց.

— Հա... ըզըզորդ, ըզըզորդ է ասում
զըզըզըլուխը...

Ոտքով ման եմ գալիս,

Զեռքով աշխատում,

Աչքով տեսնում եմ,

Ականջով լսում.

Իսկ իմ չարն ու բարին,

Իմ լան ու վատը

Ո՞վ է իմանում.

— Խելօք գլուխ:

Հինգ զգայարանք.

Ես աշքով տեսնում եմ,

Ականջով լսում,

Քթով հոտ եմ առնում,

Լեզով ճաշակում.

Իսկ ցուրտն ու տաքը,

Կոշտն ու կակուղը

Ինչով եմ զգում.

—Բոլոր մարմնովս եմ շօշափում:

Սրհեստ ընտրող մանուկը

Թորոսի որդին մի ծոյլ տղայ էր, ոչ
զիր էր սովորում և ոչ մի արհեստ:

—Ի՞նչ արհեստ սովորեմ. —Փընթփըն-
թում էր նա. —Կլեկութիւնը շատ լաւ ար-
հեստ է, բայց բորիկ ոտքով, ամանում կանգ-
նել, արագ պտրտել, դա այնքան հեշտ չէ.
Աւելի հեշտ է փուքսի փշելը, բայց այդ իմ
ձնոքում երկար չեն թողնիլ. Վարպետ էլ
դառնամ, ինչ եմ անելու, ալէտք է մատ-
նելով փոքր ինչ բամբակով տաք-տաք
պղնձին նաշաղիր ըսեմ, ձեռքերս այրեմ:
2Է, այդ իմ բան չէ:

—Դարբնի մօտ կերթամ. այնտեղ էլ
փուքս կայ, ձմեռն էլ տաք է, բայց մեծ ուժ
ալէտք է այդ զոբծի համար. Ահազին մուր-
ճով երկաթը ծեծել, որ նա տափակի, —ես
այդ չեմ անիլ, ինչ կուզի լինի:

—Նալբանդը լաւ է: Մեխի ծայլ սրել
և պայտեր շտկել, այդ շատ զժւար չէ.
բայց մէկ ամեհի ձիու ոտք բռնել, ծնկանը
դնել —երկիւղալի է. ձիու աքացին իմ ըն-
կերների ապտակից թունդ է: 2Է, իմ կար-
ծիքով դա լաւ արհեստ չէ:

Դերձակութիւնը մաքուր արհեստ է, լաւ
միտս ընկաւ: Բայց ինչ եմ ասում, ամբողջ
օրերով ծալպատիկ նստել, գլուխ քաշ զցած
կարել ու կարել, ոչ խաղալ կըլինի և ոչ
վազվրգել: 2Է, դա էլ բան չէ.

—Ինչու չըգնամ, որմնազիր գառնում,
բարձր պատերի ծայրերին կանգնեմ, այն-
տեղից կանչեմ. —, բար ու կիր տըւէք,
աղիւս ձգեցէք: Այսպէս կըգուամ և կը-
հրամայեմ, որ աշխարհք տեսնի, թէ ես
վարպետ եմ, զործս լաւ գիտեմ: Բայց վայ
թէ յանկարծ այդ բարձր տեղից ոտքս ոլկըհի

և թրմփալով ներքե զլորւի՞մ: 2է, այդ հեշտ
դործ չէ և ոչ իմ բանն է:

Երեխ չկայ այնպիսի արհետ, որ ես
հաւանեմ, զնամ սովորեմ: Թէ հիւն դառ-
նամ, ոտքս կըկտրեմ. կօշկակար դառնամ,
ձեռքս կըծակեմ. ուսկերիչ դառնամ, մատ-
ներս կայրեմ. թէ բրուտ դառնամ, ցեխ
պիտի կոխ տամ. վարժարան զնամ, գիր
պիտի սովորեմ: 2է, իմ կարծիքով, ամենից
լաւ. Է ոչինչ չըշինեմ, ոչինչ չըսովրեմ:
Բայց այնուհետև ես ի՞նչ կըդառնամ:



Ծոյլ աղջիկ

Բանն ի՞նչ կանեմ, կեղտոտ է,

Բամբակը կորիզոտ է.

Մետաքս պիտի որ մանեմ,

Մատակ պիտի որ ծամեմ,

Կտերը տիտիկ*) անեմ,

Անցնողին մտիկ անեմ.

Ուտեմ, խմեմ,

Մթնի, քնեմ:

Առածներ

Իմացողին մին, չիմացողին հազար ու
մին: — Իմացողին մէկ ասա, չիմացողին հա-
կաց, հա ասա. — Սևին սապոնն ինչ անի,
խեին խրատն ինչ անի: — Ով որ երգի սմա-
ռը, նա պար կըզայ ձմեռը. — Մի բաժակ
ջուր, ով ուզի՝ տուր: — Էսօրւայ փուշը էզուց-
ւայ նուշը: — Հացն ուտելով, բանն անելով:
Ապրել կայ՝ երկաթ է, ապրել կայ՝ արծաթ է:
Չըտի զողը ձիու զող կըդառնայ: Տաշած քարը
գետնին չի մնալ: Ծերանաս, ծերի պատիւն
իմանաս: Կուշտը քաղցածին մանր կըբրթի:

*) Կտերը տիտիկ անել կտրին նստել:

✓ Ուկերն ու գայլը

Հինում է, չի լինում մի այծ։ Այս այծն անտառումն իրա համար տուն է շինում և իր վորքիկ ու լերի հետ բնակում է նրա մէջ։ Ամեն առաւօտ այծը դուրս է գնում արածելու։ Գնալուց առաջ նա տում է իր ձագերին. «Որդիք, դոները փակեցէք, հանգիստ կացէք և դրսից ով էլ գալու լինի, դուռը բաց չանէք»։ Սսում է ու գնում։ Դաշտումը լաւ արածելուց, կուրծը կաթով լցնելուց յետոյ՝ այծը տուն է գալիս։ Տան դոները փակ են։ Նա պողերով դուռը ծեծում է ու կանչում։

«Զալիկ-մալիկ ուլիկներ,
Զալ-պըտուրիկ այծիկներ,

Ելէք, բացէք տան դուռը,

Պատրաստ է ձեր ասլուրը»։

Ուկերը բաց են անում դուռը։ Մայրը յծիք է տալիս նրանց և կրկին գնում արածելու։

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը. Նա մտքումը գնում է, որ խարելով ներս մտնէ ուկերի փարախը, երբ մայրն այնտեղ չըլինի։ Մի օր, երբ այծը դուրսն է լինում, գայլը կամաց-կամաց դալիս է, թաթով դռանը խփում է ու կանչում։

«Զալիկ մալիկ ուլիկներ,
Զալ-պըտուրիկ այծիկներ,

Ելէք, բացէք տան դուռը,

Պատրաստ է ձեր ասլուրը»։

Ուկերը մի լաւ ականջ են գնում, նրանք հասկանում են, որ դուռը թըլխ-թըլխացնողն իրանց մայրը

չէ, և պատասխանում են. «Դու մեր մայրը չես, կորիր-հեռացիք այդտեղից, մեր մայրը բարակ ձայնով ու քաղցր է մզլկում, դուռն էլ պողերով է ծեծում։ Սսում են ու դուռը բաց չեն անում։ Գայլը թողնում հեռանում է. Փոքր ժամանակից յետոյ գալիս է մայրը։ Նա գովում է ուկերին, որ դուռը բաց չեն արել։ — Դուք շատ լաւ էք արել, նրգիք, որ դուռը բաց չեք արել, թէ չէ, նա ձեզ ամենիրիդ էլ կուտէր։

Պառաւն ու այծը

Կար չըկար երբեմըն

Մի ազքատ պառւիկ,

Ունէր մեր պառաւը

Կաթնատու այծիկ.

Զալիկ մալիկ

Կաթնատու այծիկ,

Պառաւը ձմեռը

Սյծիկը ուահեց,

Իր բերնի պատառը

Նըրա հետ կիսեց.

Սիրով յօժար

Նըրա հետ կիսեց։

Երբ ձիւնը հալեցաւ,

Բըսաւ կանաչ խոտ.

Պառաւն իր այծիկը

Փուրս տարաւ արօտ.

Ուրախ-դըւարիթ,

Գուրս տարաւ արօտ,

Թանձր մառախուղը գետինը պատեց.

Պառաւի առջկից այծը կորցրեց:

Ավանու Սփսոս, ափսոս, պարաց առաջ.

Ամբուն պար Այծը կորցրեց:

Առաջ առաջ պար պար պար պար:

Պառաւը լաց էրաւ, իսկ գայլը ոռնաց,

Մոլորած այծիկը բարձր մրկլաց.

Մըկը՝ մըկը՝

Այծը մըկլաց:

Գայլն իսկոյն մօտեցաւ, այծին շալակեց.

Պառաւը ետեից բարձրաձայն գոչեց:

«Հայ-հայ, վայ-վայ»,

Բարձրաձայն գոչեց:

Խեղճը մնաց կանքնած, մի փունջ խոտ ձեռին,

Սնմխիթար ձայնով կանչելով այծին.

«Ե՛կ, — ե՛կ, — ե՛կ, — ե՛կ»:

Կանչելով այծին:



Ճախարակ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,

Մանիր սիպտակ մալանչներ,

Մանիր թելեր հաստ ու բարակ,

Որ ես հոգամ իմ ցաւեր:

Զէթ եմ ածել ականջներդդ,

Նոր շինել եմ շրտըւիկ,

Դէհ, շուտ շարժիր լայն թևերըդ,

Ռատեր շինիր սըրուլիկ:

Մանիր մանիր իմ ճախարակ,

Լիսեռնիկդ պտըւթիր,

Մանիր թելեր հաստ ու բարակ,

Իլիոդ վրայ փաթաթիր:

Տիզրանիկս գուլբա շունի,

Հանդ է զնում ոտաբաց.

Գաբրիէլս շուխա շունի,

Միշտ անում է սուգ ու լայ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,

Մանիր սիպտակ փաթիլներ,


Մանիր թելեր հաստ ու բարակ,

Որ ես հոգամ իմ ցաւեր:

Զըւալ շունինք, շաթու շունինք,

Ոչ սամոտին, ոչ պարան:

Այսպէս աղքատ զեռ եղած չենք,
Կտըրել է ամեն բան.
Դեռ հարս էի, որ գործեցի,
Քանի կարպետ, խալիչա,
Բայց դրանցից շուտ զբկեցի,
Հիմա չունիմ մի քեշա:
Կարմիր օրս երբ սեացաւ,
Եւ պարտք մնաց թէն քիչ,
Պարտատիրոջ սիրտն էլ սեացաւ,
Եկաւ տարաւ ամեն ինչ:
Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սիպտակ քուլաներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցամեր:



— շագ վե սմ :սչլանի լուկան նմմրա՞ սիլ
աղո՞ զար վե նմասմ սադի տոֆն մայ
Օհանն ու Վանին հանելուկներ սժին ա-
սում: Ինչ որ մէկն ապում էր, միւսը պտնում
էր: Վերջը Օհանն ասեց.

— Այն ինչ է. „Տակը քար է, քար չէ.
Պլոխը քար է, քար չէ, խոտ կուտի, կով
չէ. ձու կածի, հաւ չէ”:

Վանին շատ մտածեց, շատ բանի ա-
նուն տրւաւ, չեղաւ, շրգտաւ: Յետոյ ասեց.
չեմ գտնում, ասա տեսնեմ ինչն է:

— Դէ մի քաղաք տուր, ասեմ:

— Երևանը քեզ:

— Չեմ ուզում Երևանը:

— Ճոշին քեզ:

— Ճուշին էլ չեմ ուզում:

— Ալքսանդրապոլ, նուխի, Բարու,
Նախիջևան:

— Չեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում.

— Բա ո՞րը կուզես, Օհան:

— Թիֆլիսը:

— Է՞ն, քեզ լինի, դէ ասա:

— Դեռ ականջ դիր: Ուտեմ խմեմ, Թիֆ-

լիս, հազնեմ մաշեմ, Թիֆլիս։ Ես մի քահանան ձիու վրայ նստեմ, դու մի լղար ջորու վրայ։ Ես ուտեմ մածուն ու կաթ, դու ուտես բորբոնած ճաթ։

—Բաւական է, դէ ասա։

—Ասեմ, այն է, որ վրան կանգնում ենիք ու ասում. «Կօրա, կօրա, պապոնց տուն. կօրա, կօրա, պապոնց առն»։

Հա, իմացայ, կրիան է։

Հիմա դուք ասեցէք. ինչ հանելաւկներ գիտէք։



Բառախաղ

Պօղոսն ու Պետրոսը բառախաղի էին տալիս։

Պօղոսը վարժւած էր, իսկ Պետրոսը նոր էր սովորում։

Ահա թէ ինչպէս էին խաղում։

Պօղոս. Պետրոս, ասա տունը։

Պետրոս. Տունը։

Պօղոս. Քեզ կծի շունը։

Պօղոս. Ասա — դուրը։

Պետրոս. Դուրը։

Պօղոս. Ընկնիս զուրը։

Պօղոս. Ասա պաս։

Պետրոս. Պաս։

Պօղոս. Ուտես թանէ սպաս,

Պետրոս. Ել չեմ ասում. հիմա ես կը հարցնեմ քեզ։

Պօղոս. Լաւ, հարցրու։

Պետրոս. Ասա — ծիտ։

Պօղոս. Ծիտ։

Պետրոս. Ուտես մախու։

Պօղոս. Այդ չեղաւ, Պետրոս. Ես ասում եմ ծիտ, դու ասում ես մախու. այդ ինչպէս կարելի է. տեսնում ես՝ նման չեն։ Դեռ սպասիր, Ելի ես կը հարցնեմ — Ասա — ծիտ է։

Պետրոս. Ծիտ է։

Պօղոս. Պետրոսն անմիտ է։

Պետրոս. Եհ, ել չեմ ասիլ. ես անմիտ չեմ։

Պօղոս. Լաւ, շարունակենք, ել այդպէս չեմ ասիլ։

Ասա — հաւ է։

Պետրոս. հաւ է:

Պօղոս. Պետրոսը լաւ է առաջ առաջ գ

Պօղոս. Սուած սանձա:

Պետրոս. Սանձա:

Պօղոս. Պետրոսի ուստի տանձա ցողով ու սորով

Պետրոս. Հիմա ես կը հարցնեմ: Սոս նամի՞զափ ցորով

Պօղոս. Սամի:

Պետրոս. Եաքարը ծամի: Եմոյ ասա ցողով սորով

Պետրոս. Սոս հաց: ցմուշ սույն սորով

Պօղոս. Հաց:

Պետրոս. Մի թիչ կաց: դիրք անը սորով

Պօղոս. Եհ, բաւական է, դու լաւերը չեն իմանում:

Ծառերի գանգատ Բաթ Առաջ սողով

Մեր տըւած փայտից կրակ են անում, տուն տաքայնում, թոնիրը փառում, կերակուր եփում, փափուկ հաց թխում, ուտում կշտանում, բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում: այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր զերաններից շինում են աներ, զոմեր, մարագներ, ժամեր ու վանքեր, մեր տախտակներից յատակ, առաստաղ, աթու, պահարան, սեղան, նստարան, դուռ ու պատուհան և այլ շատ տեսակ կան ու կարա-

ոիք: Բայց մեզ չեն յիշում, յեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կափառում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր զերաններից ու տախտակներից կամուրջ են շինում՝ զետերով անցնում: սայլեր են շինում՝ ամեն ինչ կրում, զութան են շինում՝ հողերը հերկում, զուծ, սամի շինում՝ եզ, զոմէշ լծում, օրօրոց շինում՝ մանկիկ օրօրում: քանոն են շինում՝ տետրակներ տպում: նաև են շինում՝ ծովի մէջ լողում: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Ո՞վ չի տանձ կերել կամ կարմիր խընձոր. նուռ ու սերկեիլ, կեռաս ու սալոր. զեղձ կարմրաթուշիկ, ծիրան անուշիկ: Հապալ խազոզը, և քանի՛ տեսակ. կանաչ ու կարմիր, թուխ-թուխ ու սպիտակ, և այդ ամենը մարդիկն են, ուտում: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում: Կայ Խելօք մանուկներ, զուք որ մեծանաք, մեզ խնայեցէք սեղ պահպանեցէք կայ ձեր

հանդերում, քեզ պարտեզներում ծառեր
սնկեցէք:

Ուսումնարան,

Դաշտը սիբուն է դալար բոյսերով

Եւ անուշահոտ գոյն-գոյն ծաղկներով:

Ուսումնարանը նոյնրան սիրուն է

Իր ուշիմ, խելօք, ժիր մանուկներով:

Սիրուն է ծառը կանաչ ճղներով,

Փունջ-փունջ կախուտած իր պտուղներով:

Ուսումնարանը նոյնքան սիրուն է

Իր առաքինի, խելօք սաներով:

Աստւած, պահպանիր դու շատ օրերով

Մեր անգամատանը իր մշակներով,

Եւ մենք նորանում զուգսինք, զարդարսինք

Գեղեցիկ ուսման գոյն-գոյն փունջերով:

Ծիծեռնակ

Խեղձ ծիծեռնակը ամբողջ ցերեկը չի
հանգատանում, այլ միշտ թռչելով, դէս դէն
ընկնելով՝ նիւթ է հաւաքում:


Նիւթ է հաւաքում խոտ ու կաւ կրում,
իր բունը շինում, բմբուլով լցնում, լաւ
փափկացնում ու մէջը մտնում:

Մտնում է մէջը, երեք ձու ածում և
երեք շաբաթ վրան թուխս նստում, ձա-
գուկներ հանում:

Փափլիկ ձագերը դուրս եկան թէ չէ,
մայրը թռչում է, դէս ու դէն ընկնում, մժեղ-
ներ բերում, նրանց կերակրում:

Մի քիչ ժամանակ որ անց է կենում,
սիրուն ձագերը թևաւորում են, ընից դուրս
թռչում և իրանց մօր հետ ճանապարհ
ընկնում, լայն-լայն դաշտերի, խոր-խոր ձո-
րերի, մութ անտառների, բարձր սարերի,
կապոյտ ծովերի վրայից անցնում, հեռու
տեղ գնում:

Զմեռն անցնում է, զարունը մտնում,
մեր ծիծեռնակը էլի զալիս է, իր բունը
գտնում, ճշում ծրբլում, քանդածը շլտ-
կում, կարկատում, շինում նոր ձւեր ա-
ծում, նոր ձագեր հանում, պահում, մեծա-
ցնում, աշնան ժամանակ, առաջւայ նման,
ճանապարհ ընկնում,—լայն-լայն դաշտերի
խոր-խոր ձորերի, մութ անտառների, բարձր
սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում,
հեռու տեղ գնում,



Մեղուն ու Մարգր. ամ—
թմն զո ժայտ ալիք զժա սմացք ըլամ—
-ցի Մեղան մէկ անդամ հարցրեց իրատիրոջը:
Ժմանութիւն վկենդանիներից ո՞րն էն ամենից
օգտակարը: թմն զդույլացմի զգ ո՞ո ,զժմաց
ժմի —Գիտեմ, զու երևի կարծում ես, թէ
ամենից օգտակարը զու ես, չքայլ սխալ-
ւամ ես, պատասխանեց տէրը: այս —
-իոդ Ի՞նչպէս, տէր, ո՞րն է այն կենդանին,
որ ինձանից աւելի օգտակար է: զօյս մամէ
—Ոչխարը: . . . թմն
—Այդ հաշիւ չէ, տէր, ոչխարը իմ հա-
սակակիցս չէ: Նա մի ահագին կենդանին էն
իսկ ես մի միջատ եմ: Դու պէտք է ինձ իմ
րնկերների հետ համեմատես:

Ճատ բարի. Ճերամը քեզ պէս փոքր է,
բայց քեզանից շատ օգուտ է տալիս:

—ԳԵՐԱՄԸ ՈՐԻ Է:

Ճերամն այն իմաստուն որդին է, որ
մեղ համար աննման քնքոյց մետաքս է շինում:

Համացայ, Այդ այն շատակեր ճի-
ճուն չէ, որ անդադար կերակրում էք թը-
թան տերիներով:

— Նա ինքն է.
— Բայց զիտե՞ս, տէր, նրա չափ որ մեզ
էլ կերակրէք, մենք մեղրի տեղ ոսկի կը-
շինենք ձեզ համար։ Դուք ոչ մի կենդանի
չունիք, որ իր կերակուրք մեզ նման ինքը
լինի շինելիս և ուրիշներին էլ բաժին լինի
տալիս։ Այսէս չէ, պարոնս։

— Այո, այդ կողմանէ դու ուղիղ ես.
մենք դէպի ձեզ շատ ապելախտ ենք, որով-
հետև բոլորովին անխնամ ենք թողնում
ձեզ. . .

Մեղուն ուրախացաւ տիրոջ պատասխա-
նիցը և թռաւ նոտեց վարդենու վրայ.



ՄԵՂՈՎ, ամսով զանդակական
համեմատական գործառք աշխարհ պիտութեան
հարցուն, չափեցաւ արեգակը,
համար չաղկեցաւ մանուշակը,
ՄԵՂՈՒՆ Թողեց իր փեթակը
Տանիս դեմ, ալ աղջուածու աղջուածու:
ՄԵՂՈՒՆ Թուաւ ծաղկէ ծաղիկ,
ամ աղջուածու ՄԵՂՐԸ առաւ քաղցր անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ լուսիկ,
պարբ պարբ ՊԵՂԱՂՈՎ, պըզպըզալով:
Անուշ մեղրը մանը տըղոց,
ԳԵՂԻՆ մոմը՝ ամեն սրբոց,
իսկ շարերին կը ու խայթոց,
Կրակրծալով, կրակրծալով:

Կըսկըծալով, կըսկըծալով:
Կենդանիների վէճը.
Եզր, Կովը և Շունը վիճում էին մի-
մեանց հետ և ամեն մինը պնդում էր, թէ
մեր տէրը ամենից շատ ինձ է սիրում:
—Ի հարկէ, նա ինձ ամենքիցդ շատ է
սիրում, ասում է Եզր, և գիտէ՞ք ինչու հա-
մար: Նրա համար, որ ես եմ նրա արօրն

ու տափանը քաշումի ձեմ եմ նրա համար անտառից փայտ բերում: Նա ինձ է լծում սայլումը և իրացորեն թանում: Չաղաց, այնտեղ ալիքը չինում յետոյ էլի ես եմ տանում քաղաք, ուր նա ծախում է այդ ալիքը և իր տան համար առուտուր անում, երեխանց համար հազնելիք առնում: Ուրեմն, զուք ինչական կարծում, ետոր չըլինէի, նա ինչպէս կարող էր տպրել:

Այս մէկ: Մէկ էլ որ նրա բոլոր գերդաստանն իմ կաթովս եմ պահում: Այն մածունն ու կարագը, այն սերն ու կաթը, այն եղն ու պանիրը, այն տաք-տաք թանէսպասը, որ ամենն օր խրացում են, ու տըւածն է: Տեսնում էք ուրեմն, որ եթէ ես չըլինիմ, բոլոր քաղցած կրկտորւին: Ամ չինաւ ու Թու էլ ես ճշմարիտ առում, սիրուն գորիկ, սկսեց զունը:

նալ քո լաւութինը: Ճառ ամգամ ես ինքս էլ եմ մասնակից լինում քո արւած անուշ թանին: Մեր տանտիկինն ամեն խնոցի հարելիս թանիցն ինձ բաժին է տալիս: Ով որ քո լաւութիւնն ուրանայ, երկու աչքով կուրանայ: Ես շատ երախտագիտ եմ ոչ ոքի լաւութիւն չեմ կարող ուրտնալ: Բայց զիտէք ինչ կայ: Դուք մի նեղանաք, որ մեր տէրն ինձ ամենքիցդ էլ շատ է սիրում: Դրա համար մեծ պատճառ կայ և առա ասեմ, թէ ինչ է դրա պատճառը.

Եւ զունն սկսեց մէկ-մէկ հաշւել, թէ ինքն ինչ ու ինչ է անում:

Ասած էն շոնքառի հաշել սկսի, Էլ չի դադարիլ: Այնքան հաշեց եղանակովի հետ, որ տէրն իմացու, զնաց նրանց մօտ, շան լեզւցն ազատեց, ասելով, թողուր զրանց, Բողար, զու չգիտես, որ ամենքդ էլ ինձ հարկաւոր էք. ոչ մէկդ միւսի արածը չէք կարող անել. այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, զուք էլ սիրեցէք միմեանց:

Կորած Հորթը ողջամ
շնուր ճարպու ոց նախի սկզբանն իմայլ
Զիւն էր զալիս փաթիլ-փաթիլ.
Հետն էլ անձրե կաթիլ-կաթիլ,
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթ էր փնտրում դաշտի միջին:
Կովը եկաւ տաւարիցը,
Կուրծք ու ծծեր կաթնով լիքը:
,,Հորթուկս ուր է“ նա բառանչեց,
Խեղճ պառաւին լացացրեց.
Մինչդեռ այսպէս պառաւ ու կովը
Ողբում էին լաց ու կոծով, Յուղարար
Յանկարծ լաւեց մի բարակ ձայն,
Կովն իմացաւ, որ հորթն է այն.
Կովը վաղեց բառանչելով,
Պառաւը գնաց տընքտընքալով
Կորած հորթը մօրը գառւ,
Լիք ծծերը բերանն առաւ:

Ժրածան Մեղուն ծաղկալից դաշտում իր
ըի համար նիւթ էրաց հաւաքում և Արևի
կին շատ աշխատելով, Մեղուն շատ յպ-
և խիստ ծարաւեց.
Նրանից մօտիկ մի վտքրիկ լիճ կար-
տեցաւ լճին, վէր եկաւ ափին, որ թիշ

ջուր խմի, ծարաւը կտտրի, նորուժ վառանայ, թոշի տուն գնայ: Հէնցառը կոսացաւ, որ ջուր կում անի, յանկարծ դրբւեց, լնկաւ ջրի մէջ: Նա շատ աշխատեց, որ ցամաքը դարձայ, բայց մի փոքր ալիք նորան ներս քաշեց, ափից հեռացրեց:

Այսպէս խեղճ Մեղռն ցամաքից զրկւեց, ջրի երեսին թևերը փռեց և յոյսը կտրած՝ մնաց մեկնըւած:

2. Օգնութիւն.

Որտեղից որտեղ՝ օգնութեան հասաւ մի շատ բարեսիրտ սիրուն Աղաւնի: Բարի Աղաւնին մօտեցաւ լճին և նայեց տեսաւ մեր խեղճուկ Մեղռին՝ յուտահատ փռւած ջրի երեսին: Իսկոյն շտապեց, մի տերև կտցեց և տարառ Մեղռի առաջել ձգեց: Ամազագի Մեղռուն բարձրացաւ տերևին վրայ, խելքը ժողովեց, զէս ու զին նայեց, որ տեսնիւով էր իր ազատողը, մահից փրկողը: Եատ նայեց վրան և ուզեց խօսել, Աղաւնուն զովել,

շնորհակալ լինել: Բայց մեր բարեսիրտ սիրուն Աղաւնին շատ լաւ խմացաւ Մեղռուի միտքը, և ոչինչ չուզեց լին նրանից, այլ թուաւ գնաց, որ ուրիշ տեղ էլ նոյն բարիքն անէ:

3. Երախտագիտութիւն.

Մի օր մեր Մեղռուն նոյն զաշտի միջին մի սիրուն ծաղկից նիւթ էր ժողովում և աղտօղալով Աղաւնուն զովում: Մեղռի հանգէպ, մի ծառի վրայ նստած ննջում էր ծանօթ Աղաւնին:


Հենց այդ ժամանակ Մեղռուն նկատեց, որ ահա մէկ մարդ, հրացանը ձեռին, մէջքը կուցրած, շար օձի նման սողում սուս ու փուս զէպի Աղաւնի: Մեղռուն հասկացաւ, որ դա շար մարդ է, անզութ որսորդ է, ուզում է սպանել անմեղ թոշունին, իր բարերարին: Եւ ճշմարիտ որ այդ էր այն մարդու շար նպատակը:

Որսորդը չորեց, տեղը պնդացրեց և հրացանը երեսին բռնեց: Հենց մատը զրեց

կայծառի ոտքին և ուզեց քաշել, գործը
վերջացնել, այդ իսկ ըոպէին կայծակի
նման Մեղուն վրայ հասաւ և չար որսորդի
ձեռքն այնպէս խայթեց, որ նա վեր ցատ-
կեց: Նրա հրացանը նշանից շեղւեց և իր
թնդիմով անմեղ Աղաւնուն քնից զարթեցրեց
ու տեղից թոցրեց:

Սյոպէս մեր Մեղուն իր բարերարին
վերահաս մահից փրկեց ազատեց:

Ինչ որ ցանես, այն կը հնձես:
Արած լաւութիւնը չի կ'ըշի:



Փռքը իկ գառը.

Մի փոքրիկ զառ, ձևնի նման մարուր սպիտակ,
Մի օր կնաց մօր հետ դաշտը, որ արածի:
Գաշտ որ հասաւ, ոկսեց թռչել քարերի տակ,
Ել չեր ուզում փոքր միջոց հանգիստ նստի.
Սյու ու այն կողմ վազվելով շափ էր ընկնում,

Թէ բար, թէ ժայռ, թէ փոս, թէ ձոր չէր հարցնում:
— Որդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նրա մայրը,
Զգնչ կացիր, որդեակ, լիր իմ խրատը:
Բայց գառնուկը մօր ասածին ուշ չի զարձնում,
Իր խաղան ու վազվելին է շարունակում:
Եւ վերջապէս երբ մօր խօսրին ականջ չարաւ,
Սարի գլխին իր զժութեան պատիմն առաւ,
Մի մեծ քար կար այնտեղ ընկած. նրա ծայրում
Մեր գառնուկը թռչկոտալով խաղ էր անում,
Մէկ էլ յանկարծ նրա վրայից զլորւեցաւ,
Ոտի մէկը տակովն էլաւ, կոտրւեցաւ:

Մեղուն և հաւը.

Հաւը Մեղուի վրայ ծիծաղելով՝ ասաց
մէկ անգամ.

— Ի՞նչ անշնորհք ճանճ ես դու, ամբողջ
օրը ծաղկից ծաղիկ ես թռչկոտում և ոչ
մի բանի պէտք չես զալիս:

— Իսկ դու, Հաւիկ մարիկ, ի՞նչ ես շի-
նում, հարցրեց Մեղուն,

— Միթէ չըգիտե՞ս, թէ ի՞նչ եմ շինում
ես: Քեզ նման պարապ-սարապ չեմ տրզ-
տպում: Ես օրը մէկ ձու եմ ածում, մէկ
ձու. զիտե՞ս մէկ ձուն քանիսն է:

— Գիտեմ, զիտեմ, հասկացայ: Բայց ես
մինչև հիմա կարծել եմ, թէ դու օրը հա-
րիւր ձու ես ածում:

— Ի՞նչպէս կարելի է օրը հարիւր ձու
ածել, անխելք մեղու:

— Հապա եթէ քո ածածրդ ընդամենը
մի ձու է, ել ինչու ես հարիւր անգամ
կըրկըշում, թէ հայ, հարայ, լսեցէք, իմա-
ցէք, որ ես ձու եմ ածել: Իմ կարծիքով՝
այդքան կըրկըշալուն մի ձուն շատ քիչ է:
Այնպէս չէ, իմաստուն Հաւիկ մարիկ:

— Բայց դու ինչ ես շինում, դու, որ
իմ մի ձուն քիչ ես համարում:

— Ես ինչ որ շինում եմ, քեզ պէս կըր-
կըշալով չեմ յայտնում ուրիշներին: Ես գլուխս
քաշ պյած, մեղք եմ շինում: Գիտես ինչ է
մեղրը: Դա հաւի կերակուր չէ, քո խելքի
բանը չէ, Հաւիկ մարիկ:



Պատկներ.

Կարդ ծաղկին լինինք նման
Եւ օրինակ հեղութեան.
Թող վարդը հանգատանալ
Մեր մատադ սրտի վրայ:

Աղնիւ սիրուն մանուշակ,
Համեստութեան օրինակ,
Տուր մեղ ծաղիկ գեղեցիկ.
Քո քնքուշ հոտ անուշիկ:

Օրինակ անմեղութեան,
Դաշտի սիրուն դու շուշան,
Եկ զարդ եղիր մեր պարին,
Եկ միացիր մեր երգին:

Կանաչ խոտը դաշտերի
Մեր սրտին է սիրելի:
Թող ոստը կաղնի ծառին
Պակ լինի մեր զլխին:

Սիրուն կանաչ պսակին
Թող միանանք, բարեկամք,
Եւ յոյսելս անբաժան
Մնան մեղնից յաւիտեան:

Մանուշակ

Կապոյտ զլսով, կանաչ ոտով
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.
Թէս տունկս փոքրիկ է ցած,
Արօտներում միշտ թաք կացած,
Բայց իմ փունջս ամենի տան՝
Թէ աղքատի, թէ մեծատան,
Երբեք գարնան առաջին զարդ,
Կարէ տեսնել ամենայն մարդ,
Ես եմ սիրուն գարնան գուշակ,
Իմ անունըս է մանուշակ:

Ոսկի և բրկաթ.

Ոսկին երկաթին արհամարելով, ասոց
մէկ անգամ.—Երանի զիտենամ, դու ինչա-
ցու ես, որ մետաղների կարգն ես ընկել.
Քո սև ու ժանգոտ երեսովդ մարդու վրայ
զգւանք ես բերում: Նայիր ինձ վրայ.
Մես՝ ինչպէս զեղեցիկ եմ փայլում, ինչպէս
շողշողում: Նայիր մեր սիրուն օրիորդների
ու հարսների ականջներին ու մատներին,
դու կըտեսնես իմ փառքն ու պատիւը.
Նայիր նրանց ճակատների շարքերին, դու

կըտեսնես իմ փայլն ու զեղեցկութիւնը.
Նայիր նրանց պարանոցներին ու կուրծքերին,
դու կըտեսնես իմ մանեակների ու շղթա-
ների նրբութիւնը: 2եմ հաշում ասպարան-
ջանները, գնդասեղները. զիտեմ որ դու
այնքան կոշտ ու կոպիտ ես, որ այդպէս
քնքուշ բաների մասին ոչ ճաշակ ունիս, ոչ
հասկացողութիւն:

Երկաթը պատասխանեց Ոսկուն.

—Ես չեմ ուրանում, Ոսկի աղա, որ
դու զեղեցիկ ես, ամեն բանի զարդն ու
զարդարանքը դու ես, զինըդ շատ բարձր է
աղքատի բան չես, բայց ինչու ես չափիցդ
դուրս գուղանում: Քո սիրուն օղակներդ ոչ
տկանիջի լսելիքն են աւելացնում, ոչ մատնե-
րին ու կոներին զօրութիւն ու ժրութիւն
տալիս: Ճակատների փայլուն շարքերը գըլ-
խին խելք չեն տալիս. ոչ կուրծքերի նուրբ
մանեակները սրտին գութ ու խնամք:

Ի՞նչ ասեմ մեր օրիորդներին, որ քեզ
այդշափ պատիւ են տալիս, քեզ համար հալ-
ւում, մաշում ու բարակացաւ ընկնում: Իմ
միավորքիկ ամեղը քո բոլոր զարդարանք-

ներից աւելի է օպոտ տալիս: Գիտե՞ս, Ոսկի աղա, իմ փոքրիկ ասեղը քանի տուն է պահում, քանի որբի կերակրում: Իմ խոփն ու ձերշը ամբողջ աշխարհին հաց են տալիս:

Մարդիկ ինչ որ շինում են, կամ պէտք է կարեն, կամ պէտք է ծեծեն, կամ պէտք է սղոցեն, կամ պէտք է խարտոցեն, կամ պէտք է կարկատեն: Իմ ուրագն ու կացինը որ չըլինին, իմ դուրն ու շաղափը, իմ սղոցն ու մուրճը, իմ կտրիչն ու խարտոցը, էլ կարող էին մարդիկ քար քարի վրայ դնել, փայտ փայտի վրա:

Ահա այդպէս պարծենկոտ ես զու Ռ'սկի աղա. զո փայլից կուրացած՝ ուրիշի լաւութիւնը չես տեսնում:

Արշակի շարադրութիւնը.

Երկար ժամանակ սպասում էի, թէ երբ պէտք է ինձ ուսումնարան տանեն: Ուսումնարանի մօտովն անցնելիս՝ որ լսում

էի աշակերտների երգելու ձայնը, սիրոս մի ուրիշ կերպ էր զառնում, մտքում ասում էի. ախ, Երբ կըլինի, որ ես էլ սրանց մէջը լինիմ, սրանց պէս կարդամ, սրանց պէս երգեմ, սրանց հետ խաղամ. արդեօք կարժանանամ այն օրին:

Վերջապէս փափագիս հասայ. Հայրիկս մի առաւօտ ինձ յայտնեց, թէ երկուշարթի օրը քեզ տանելու եմ ուսումնարան և այսօր պէտք է գնամ քո ուսման պիտոքներն առնեմ: Այն օրն էլ ես հաց չըկերայ շափականց ուրախութիւնիցս:

Երեկոյին հայրս եկաւ տուն: Ի՞նչ ասես որ չէր առել ինձ համար.—թուղթ, թանաք, թանաքաման, դասագիրք, տեսակ-տեսակ գրչածայրեր, գրչակոթեր, գրատախտակ, քարեգրիշներ, մատիտներ, մի քառակուսի քանոն, մի սիրուն գրչահատ: Բոլորը ջոկ-ջոկ թղթերում փաթաթեցի ու դրի պահարանումս, մինչև հասաւ երկուշարթին՝ ուսումնարան գնալու օրը:

Նոր տարի,
Ահա հասաւ նոր տարի,
Հետը բերաւ նոր բարի.
Մանր տըղոց ուրախ օր,
Բարի զաւակ հօրն ու մօր:

Մանր տղայքն են ուրախ,
Ունին կաղին զողինաղ,
Մալորի չոր, չամիչ. թուղ,
Փշատ, ունաք և ընկուգ:

Մանր տղայք չըմոռնաք,
Աշխարհումս չէք մենակ.
Ուրիշ շատ խեղճ տղայք կան,
Աղքատ ու անօդնական.

Նոքա հայր ու մայր չունեն.
Սև չոր հացի կարօտ են.
,,Աղքատներին սղորմած
Եղէք“, կասէ ձեզ Աստած:

Մանկական խաղ.

Ա. Աշակերտ

(ասում է անգործ մանկանը)
Ով դու մանուկ ծաղկահասակ,
Հերիք անգործ պտրապ ման գասան
Զուր մի կորցնիք ոսկի ժամերդ,
Թէ չէ տղէտ, բիրտ կըմնաս:

Բ. Աշակերտ

Խղճա, խղճա քո օրերին,
Սրդէն անցաւ քո ութ տարին.
Ի՞նչ ես սովորել թափառելով,
Հասկացել ես չարն ու բարին:

Գ. Աշակերտ

Չէ որ մեղք է խղճուկ հայրեղ,
Որ կաշխատի միշտ անգադար,
Թէ ինչ է իր որդին մի օր
Դառնայ լաւ մարդ իրան համար:

Աշակերտաց խումբը

Գոնէ նայիր ու մեղ առ բեղ
Աշխատութեան օրինակ,
Եւ մի անգին ժամանակը
Փշացընիլ շարունակ:

Ե՞կ, եկ, հերիք սլարապ չըջես,
Գորանից ըեղ օգուտ չըկայ.
Ե՞կ վարժարան, կարդա մեզ հետ,
Որ խեղճ հայրդ ուրախանայ:

Անգործ մանուկը

Ինչի կըդամ ձեր վարժարան,
Որ զուր զերի ես զառնամ,
Ազատ, ուրախ փողոցներում
Լաւ չէ խաղամ ու ման զամ:

Աշակերտաց խումբը

Մենք էլ երբոր բալորովին
Դասներս լաւ կըսերտենք,
Սյուն ժամանակ ազատ ուրան
Խաղ կը խաղանք ու կ'երդենք:

Անգործ մանուկը

Հապա որ ձեղ վարժապետը
Միշտ կըծեծէ, կըպատժէ,
Միթէ այդ վատ պատժարանը
Դալ ու նստելը կարժէ:

Խումբը

Այստեղ ոչ թէ ծեծ ու պատիժ
Այլ ուսում են մեզ տալիս,
Միայն ծոյլ, վատ աշակերտը
Նախատում է ու լալիս:

Անգործ մանուկը

Հապա որ միշտ հրամանով
Դուք կըկանդնէք, կընստէք.
Եւ ինձ նման ուղած բողէն
Ազատ մանզալ կարող չէք:

Խումբը

Ով որ չունի կարդ ու կանոն,
Նա ասում է անկիրթ մարդ,
Կարդ, կանոնը մանկանց համար
Են գովական սիրուն զարդ:

Ե՞կ, ասում ենք, Եկ վարժարան,
Զես կշտանայ թափառելով
Ում ուղում ես՝ զնա, հարցրու,
Մարդ կըդանաս ուսումով:

Անգործ մանուկը

Ես էլ կըդամ, Ես էլ կըդամ,
Էլ չեմ չըջիլ պարապ, զուր.
Ես էլ ձեզ հետ միշտ կըկարդամ,
Էլ չեմ ընկնիլ զանէ զուռ:

Խումբը

Ե՞կ մեզ մօտ, եկ մեզ մօտ,
Քեզ կընդունենք մեծ սիրով.
Միասին, միասին,
Խաղանք, խնդանք երգելով:

Քոլոռը

Եկէք. եղբարք, թե թեկի տանք,
Իրար գրկենք ուրախանանք,
Քանի այդպէս զեռ մանուկ հնք,
Ուսում առնենք, ինսպանք,
Խաղանք:
Դէհ, եղբարք, դէհ, եղբարք,
Ուրախ երգենք ու խաղանք:
Ոչ ոք չունի մեզի նման
Ուրախ օրեր, զրւարթ, ժամեր,
Սշակերտաց կեանքն է՝ անհոգ,
Սիրտն է մաքուր, գործն օգտաբեր,
Դէհ, եղբարք, դէհ, եղբարք,
Ուրախ երգենք ու խաղանք:
Կեցցէ, կեցցէ մանուկ հասակ,
Կեցցեն ուսում, խաղի ժամեր.
Կեցցէ յաւէտ մեր վարժարան,
Կեցցենք և մենք, աշակերտներ:
Պար բռնենք ու երգենք,
Քանի որ իրար հետ ենք
Տրայ լայ, լայ, լայ, լայ, լայ,
Տրայ լայ, լայ, լայ, լայ, լայ.

Տղայոց աղօթք.

Հայր մեր երկնաւոր, հայր ամեն մարդի.
Դու ինձ ամեն օր տաս հազար բարի,—
կեանք, լոյս, կերակուր, հայր ու քաղցրիկ
մայր, մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր:
Իսկ ես ի՞նչ ունիմ, որ ինչ տամ Քեզի,
առջերդ կընկնիմ, կենամ աղօթքի. , , Ընորհըդ
տուր ինձ, որ ծնողներիս, ուսուցիչներիս և
իմ մեծերիս լինիմ սիրելի, իսկ Քեզ հաճելի:

Առաւոտեան աղօթք.

Ո՛վ տէր մեր գիտու,
Դու լոյս առաւօտ,
Ծագիր և մեզ մօտ
Քո լոյսդ անաղօտ:
Թող լուսաւորին
Մեր միտքն ու հոգին,
Ու Քո լոյս անաւն
Լինինք փառաբան:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:



Հայր մեր. ը 2

Մեր Հայր, որ երկնքումն ես, սուրբ լինի
քո անումը, գայ քո թագաւորութիւնը, քո
կամքը լինի ինչպէս երկնքումը և երկրում:
Մեր ամենօրւայ հայր տուր մեղ այսօր.
Թող մեղ մեր պարտքերը, ինչպէս մենք
թողում ենք մեր պարտապաններինը: Մեզ
դէպի փորձութիւն մի տանիլ, այլ փրկիր
չարից, որովհետեւ քոնն է թագաւորութիւնը,
զօրութիւնը և փառքը յաւիտեան. ամէն:

Տէրունական աղօթք:

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի
անուն քո. եկեսցէ արքայութիւն քո, եղիցին
կամք քո որպէս յերկինս և յերկրի. Զհաց
մեր հանապազորդ տուր մեղ այսօր. Թող
մեղ պարտիս մեր, որպէս և մեք թողումք
մերոց պարտապանաց. և մի տանիր զմեղ
՚ի փորձութիւն, այլ փրկեա զմեղ ի չարէ.
զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք
յաւիտեանս. ամէն:



Ուսումնա Մայրենի Հեղուի, ու տարի 25 կ
» » բ. տարի 30 կ
» » գ. տարի 55 կ

ԳՐԱՆ Է 25 ԿՈՎ.

Դիմել՝ Въ Центральную книжную торговлю,
Въ Тифлисъ.

2013

3205

ՀՀ Ազգային գրադարան



NL0062153

